ամտը կատարելով՝ Հայաստանի կառավարությունը յայտարարում է, որ միացեալ Հայաստանի պետական ձևն է ռամկավար հանրապետություն և որ ինքը հանդիսանում է միացեալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Այսպիսով, ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագոյն սէրն ու տնօրէնը, և Հայաստանի պարլամենտն ու կառավարությունը հանդիսանում են միացեալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագոյն օրէնսդիր և գործադիր իշխանությունը:

«Հայաստանի կառավարությունը սոյն ամտը հրատարակում է 1919թ. ապրիլի 27-ի պարլամենտի որոշմամբ կառավարությանը տրուած յատուկ լիազօրությունների հիման վրա»:

Մինիստրների խորհրդի նախագահի և արտաքին գործերի մինիստրի պաշտօնակատար	Ալ. Խատիսեան
Ներքին գործերի մինիստրի պաշտօնակատար	Ս. Մանասեան
Զինուորական մինիստր գեներալ մայոր	Ռ. Արարատեան
Արդարադատության մինիստրի պաշտօնակատար	Յ. Զմշկեան
Հանրային կրթության մինիստր	Գ. Մելիք Ղարագէոզեան
Ֆնանսատարության մինիստր	Ս. Թորոսեան
Պարենաւորման մինիստր	Ռ. Վերմիշեան
Ֆինանսների մինիստրի պաշտօնակատար	Գ. Ջաղէքեան
Գործերի կառավարիչ	Գ. Խատիսեան

1919թ. մայիսի 28-ին, Երևան քաղաք.

Յայտարարության ընթերցումից յետոյ, համաձայն նախօրօք եղած որոշման, բեմ բարձրացան և նստեցին Հ. Խորհրդի անդամների շարքում, Արևմտահայ Գործադիր Մարմնի ընտրած 12 պատգամաւորները՝ Հմ. Մանուկեան, Վ. Քրմոյեան, Զ. Կորկոտեան, Վ. Յոխիկեան, Վան-Փուշ, Վ. Առաքելեան, Ա. Մաքսապետեան, Ա. Միրզոյեան, Ա. Կիտուր, Հ. Կոսոյեան, Ա. Սասունի, Հ. Հայրապետեան: Երկու հատուածների միացման յայտարարության առաջին գործնական արտայայտությունն էր այդ, որ հասարակությունը ողջունեց ոգևորուած ծափերով:

Այնուհետև կառավարության կողմից յայտարարուեց ընդհանուր ներում վարչական կարգով բանտարկուածների համար, իսկ քրէական յանցագործների պատիժը կրճատուեց կէս առ կէս: Եւ նախագահի՝ յուշարձանի, շքանշանի ու հրատարակությունների մասին կառավարական որոշումները յայտարարելուց յետոյ, յաջորդաբար ողջոյնի ճառեր խօսեցին Հ. Խորհրդի նախագահ Ա. Սահակեանը, արևմտահայերի ներկայացուցիչ Քրմոյեանը, կաթուղիկոսը, Ամերիկեան կոմիտէի ներկայացուցիչ հարիւրապետ Էլդերը, Պարսկաստանի, Վրաստանի և Ադրբէջանի ներկայացուցիչները, Հ. Յ. Դ. Բիւրօի կողմից՝ Ս. Արարատեանը, Հ. Յ. Դ. Երևանի և Վրաստանի Կ. Կ.-ի